

11. 727

891.71

4-65

891.71-3

4-7065

Վ. ԿՈՒԱՆՈՎՍԿԻՑ

25 NOV 2016

ԳԳԳՎ ԼԵՐԱԴԱՐՁ

ԹԱՐԳ.

ՕՐ. ՄԵՆԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՄՈՍԿՈՒՍ.

ՏՊԱՐԱՆ Բ. ԲԱՐՈՈՒԴԱՐԵԱՆԻ

1907

Հանձնարար «Բնակչության համայնականության»
Բնակչության համայնականության

891.71

4-65

պ.

Վ. ԿՈՒՆՆՈՎՍԿԻՑ

42

25 SEP 2006

ԳՐԱԴԱՐԱՆ

ԹԱՐԳ.

ՕՐ. ՄԵՆԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ

4914



ՄՈՍԿՈՒՍ.

ՏՊԱՐԱՆ Բ. ԲԱՐՈՒՈՒԴԱՐԵԱՆԻ
1907

8/2

ՎԵՐԱԴԱՐՁ

ՎԼ. ԿՈՒԱՆՈՎՍԿԻՅ

Թ. Ա. Բ. Գ.

ՕՐ. ՄԵՆԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ

Ամպամած օր էր: Երկնքի վրայ ոչ մի կապոյտ տեղ չէր երևում: Արեգակի ցուքերն անգամ չէին կարողանում դուրս գալ թանձր, անշարժ ամպերի միջից: Կարծես մոխրագոյն ծածկոց է փռուել երկրի վրայ և ամեն տեղ ու ամեն ինչ մոխրագոյն են երևում:— Թէ մարդիկը, թէ խրճիթները, և թէ գիւղը: Իսկ երբ անձրևի գալը մտնում էր, այն ժամանակ շուրջն աւելի մոխրագոյն դարձաւ և անձրևային մառախուղը տարածուեց օդի մէջ: Չորս կողմը խաղաղ էր: Ոչ քամի կար, ոչ ուրտ և ոչ ծառերի շրշիւն: Կարծես սառել էր ամեն ինչ և բնութիւնը կարծես մեռել էր:

Բարսեղը նայեց իւր չորս կողմը և ոչ մի ծանօթ բան չըտեսաւ. ոչինչ առաջուանից, ինչ որ միշտ պատկերւում էր նրա երեակայութեան մէջ: Տասներկու տարուայ ընթացքում բոլորը փոխուել է. թէ ճանապարհը, թէ ջրաղացը, թէ խրճիթները և թէ մինչև անգամ կապտացած, անշարժ անտառը: Բոլորն այն չնո: Բոլորը նոր են, անծանօթ են: Բարսեղը զգաց թէ ինչպէս թախիծը պատում է իւր սրտին: Կարծես նա կորցրել է յաւիտեան ինչ որ մի բան՝ իրան մօտիկ, թանկագին: Եւ նա յիշեց, ինչպէս տասներկու տարի առաջ վերջին անգամ գնում էր այդ ճանապարհով, թողնելով անյայտ ապագային իւր ընտանիքը, սիրելի զղեակը և թանկագին ծանօթները: Այն ժամանակ զարնան առաւօտ էր: Սուպլապատ երկինքը բացուել էր: Այժմ փայլում էր պարզ արեգակը: Ամենուրեք տարածուել էին հացի, մեղրի և անտառային ծաղիկների հոտերը: Մեղունները սզտղում էին, արտոյաներն



ուրախ դայլայլում: Իսկ ճանապարհի երկու կողմերում՝ լեցուն գլուխները հաղիւ օրօրուելով, խիտ պատի նման կանգնած էին ցորենի հասկերը: Նայում էին խայտաբղէտ տերեւիկները և մրտավարդերը: Ամեն կողմ բուրմունքով լիքն էր՝ պայծառ ու թարմ: Ծանր էր բաժանուիլ ու գնալ: Մարդ ուղում էր պառկել այստեղ՝ հասկերի և ծաղիկների մէջ տեղ, շնչել զարնանային օդը և նայել երկնքին: Թւում էր թէ հոգին սկսում էր այնուհետեւ լաւ հանգստանալ ու թեթևանալ...

Բայց զանգակները զղրդացրին, ձիերը սմպակներով արփացրին և, փոշին բարձրացնելով, կառքը սլացրին առաջ ու առաջ, ու տարան՝ նրան էլ, նրա ճանապարհորդակիցներին էլ:

Իրանց ետևում, կապտագոյն անտառի մէջ՝ թողեցին տունը իւր թանկագին բնակիչներով, թողեցին ուրախ ծիծաղը և սրտագին, հարազատ կեանքը: Առջևումը երևացին երկաթուղու իջևանը, ուղեպահի կացարանը ու դէպ հեռուն ձգուած երկաթուղու դոյզ գիծը:

Աքտրեալի համար նոր կեանք էր երևում: Անյայտ ու թախծալի կեանք: Իսկ հաճարը և դաշտային զանազան ծաղիկներն առաջուայ նման կուրծք էին լցնում՝ իրանց զուարթացնող և թարմացնող բուրմունքով:

Եւ այդ բոլորը—զանազան մտքեր, տանը թողած ընտանիքը և առաջիկայ տունդրաները (Սիրիւիայի ճահճոտ տեղերը) զարնան անոյշ բուրմունքը—բոլորը միաժամանակ տարօրինակ էին թւում՝ նրան, բոլորն—աններդաշնակ: Տանջանքն ու հրճուանքը, կեանքն ու մահը, ծիծաղն ու արտասուքը բոլորը մէկ տեղ էին: Կարծես մէկը քաշել է միւսին և կարծես մէկն առանց միւսը չէ կարողանում ապրել, ինչպէս բարեկամներ, ինչպէս սիրող կիներն առանց ամուսինը:

Բարսեղին առաջին անգամն էր, որ տիրեց ծանր զգացում: Ընտանիքի բաժանուիլը թւում էր մի անսովոր ձրնշում: Հոգին տատանւում էր: Կարծես մի ինչ որ բան քաշում է նրան դէպի տուն, քաշում է գնալ, զրկել կնոջը, երեխաներին, ոգևորել նրանց, գոնէ, մի քանի քաղ-

ցրե խօսք ասել, փայփայել: Ընտանիքը նրան թւում էր խապառ մոլորուած, երեխայի նման խղճուկ և անօգնական: Եւ չէ՞ որ այդ բոլորը մօտիկ է իրան. ահա այնտեղ, հացի արտերի ետևում, կապտագոյն անտառի միւս կողմում:

Բայց կառքը զընկզընկացնելով, առաջ էր սլանում: Իրար ետևից անցնում էին ուղեցոյց սիւները, խրճիթները և հարազատ դղեակը բոլորովին հեռանում ու հեռանում էր:

Ահա և իջևանը: Մէկ մէկ մարդիկ երևացին՝ հետաքրքիր հայեացքներով: Երևաց մթերանոցը և պատերը, որոնց վրայ կախուած էին գնացքների երթևեկութեան ժամացրութիւնները: Երևաց ոչ ընդարձակ պլատփորման: Ահա և գնացքները: Ահա և կուպէն: Ներս մտան և դուռը աղմուկով ծածկուեց: Մնաք բարե իմ ընտանիք:

Մնաք բարե, իմ հարազատ և սիրելի վայրեր:

Նոր կեանքը առջևն է: Տխուր, թախծալի կեանք, թախծալի է բոլորովին մութ անյայտութեան մէջ: Կանցնին տարիները, կանցնի և այս անյայտ կեանքը, և կգայ մի ուրիշը, նոյնպէս ծանր, անյայտ: Եւ միշտ ապագան անհասկանալի ու մռայլոտ է: Սյուպէս է մինչև անգամ և մի բուսկից, մի օրից և տասը տարուց յետոյ: Երբորդ զանգը հնչուեց: Գնացքը ծանր նաղով շարժուեց իւր տեղից: Իրար ետևից երևացին իջևանի կառավարիչը՝ կարմիր գլխարկով, մի դուռը, որի վրայ դրած էր «գրասենեակ», փոստային բաժանմունքը: Ահա ջոքաշը: Յետոյ երևացին, փոքրիկ պարտեզի վանդակամածը, ծաղիկների բլրակները և շատրուանը: Եւ այդ բոլորն, առաջ իւր համար անպէտք էին և աննկատելի, իսկ այժմ նրան թւում էր թէ այդ բոլորը նրան հարազատ են և մօտիկ: Եւ մինչև անգամ իւր ետևում մնացած փոստատան կառավարիչը, պահպանը և բեռնակիրը, այժմ երևում էին բարեկամներ և լաւ մարդիկ: Կամենում էր նրանց առաջ բանալ իւր սիրտը ու ասել ինչպէս սարսափելի է կոտրել իւր կեանքը: Բարսեղը ձեռներով ծածկեց իւր երեսը: Նա չէր կամենում տեսնել ցերեկուայ լոյսը: Սիրտը շատ մութն էր, կամենում էր, որ աչքերն էլ լինին մութ: Եւ ծանր մտքերը.— «ի՞ն-

չու համար են այս բոլորը, ի՞նչու համար են այսքան տանջանքները» Ճնշում էին նրա ուղեղը:

Իսկ զնայքը, թնդացնելով անիւներով ու շղթաներով, գնում էր առաջ ու առաջ: Եւ մութ մոխրագոյն ծուխը փռուել էր ամբողջ տարածութեան վրայ և ծածկել արեգակն ու կապոյտ երկինքը: Երբոր Բարսեղը բացաւ իւր երեսը, նրա աչքերը հանդիպեցին իրան ուղեկցող մարդու սառն ու անտարբեր աչքերին: Կարծես ինքը կեանքն է արտացոլում այդ աչքերի մէջ:

Մթնել էր...

Հարթ տեղերում տարածուել էր մառախուղը, իսկ երկնքումը տեղ տեղ ամպերն էին ցրուել: Աստղերը ցրում էին ու իսկոյն ծածկում թխպերի տակ: Օդը թարմացաւ և, անտառը բոլորովին թաց ու խոնավ՝ աշնանային հոտ էր փչում: Դաշտումը վառուեց կրակներ: Նայելով նրանց, դգացուեց կեանք և ջերմութիւն: Բարսեղը յուզուած նայում էր իւր առջև: Այնտեղ՝ հեռու այդ կրակների մէջ կար և իւր հարազատ կրակը: Կարծես մի ուղեցոյց աստղ լոյս էր տալիս: Եւ Բարսեղը աչքի առաջ էր բերել իւր մօտիկ մարդկանց ղէմքերն, ուրախալից և սրտառու ղէմքեր: Մէխ Աստուած, ինչպէս կկամենայի շուտ տեսնել նրանց ու սեղմել կրծքիս: «Ի՞նչպէս է այժմ Սարգիսը, ինչպէս է Վառվառէն», մտածում էր նա և նրա երեւակայութեան մէջ պատկերանում էր աղջկայ և տղայի մութ պատկերները: Բայց նա չկարողացաւ զրկել նրանց: Եւ այդ տարօրինակ էր թւում նրան. մօտիկները հարազատները անյայտ ու օտար էին: Նա բաժանուեց նրանցից, երբ որ տղան տասնուչորս տարեկան էր, իսկ աղջկը ութ տարեկան: Այժմ նրանք մեծացել են, երկուսն էլ կեանքի մէջ մտել: Ինչպէս է անցել նրանց այդ սարսափելի և անհասկանալի կեանքը:

Բախտաւոր են, արդեօք, նրանք: Ահա այնտեղ են նրանք՝ մօտիկ բլրակի վրայ: Մի քանի բոպէից յետոյ բոլոր անյայտը յայտնի կլինի: Բայց ինչպէս ծանր է: Կարծես օրհասական մի գաղտնիք է ծածկուած այդ մթնշաղ՝ ամպամած օդում: Ի՞նչ կայ այնտեղ: Մտածում էր Բարսեղը:

Շները հաջեցին: Հաջեցին միաժամանակ, բարձրաձայն և կատաղած: Մի ձայն լսուեց և թրխկաց պարտէզի դուռը: Ով որ մէկը մթութեան մէջ դուրս եկաւ բակի դռնից և կանգ առաւ անշարժ դիտողութեան մէջ:

Բարսեղը տրորեց իւր կարճատես աչքերը, լարեց իւր բոլոր ոյժը, որ թափանցէ թանձրացած մութը: Բայց չէր երեւում թէ ով էր կանգնած, իսկ ով որ մէկը կանգնած էր անշարժ և սպասողական դրութեան մէջ:

Բայց ահա կառքը մօտեցաւ բակի դռան: Շները կատաղե հաջում էին դռանը: Մէկը ոռնում էր: Ով որ դուռաց նրանց վրայ: Կառապանը քաշեց երասանները և ձիերը կանգնեցին:

Բարսեղն իջաւ կառքից ու նետուեց դէպի դուռն, որտեղ կանգնած էր մի մարդ: Բարձր ու լեքը մարդ էր՝ սև մեծ միրուքով: Նա հագած էր չթից կարած շապիկ և բարձր կրունկներով կօշիկներ: Այդ մարդու աչքերից թլոււում էր թէ նա ծանօթ է, բայց միևնոյն ժամանակ հեռու էր և օտար:

Նա նայեց Բարսեղին, հետաքրքիր, բայց հանդիստ հայեացքով: Եւ վերջապէս ասաց.

— Այդ դ՞ու ես, հայր:

— Ձայնը կոպիտ էր և բարձր:

— Ես... ես... եմ շտապեց պատասխանել Բարսեղը և զրկեց նրան: Նրանք համբուրուեցին:

— Մինք սպասում էինք քեզ աւելի վաղ: Դեռ լոյսին ասաց որդին:— Դէ, գնանք մայրիկի մօտ:

Նրանք զնային նեղ ու մութ, հագիւ նկատելի ճանապարհով: Ճանապարհի երկու կողմերին, բարձր կանգնած էին տերեւթափ ծառեր: Մառերի մէջ տեղը այնքան մութ էր, ինչպէս փոսի մէջ, իսկ բարձրից միայն երեւում էր մոխրագոյն երկինքը:

Ես վաղուց է, որ չեմ եղել այստեղ, այնպէս որ մոռացել եմ որտեղով գնամ, ասաց ուրախ ծիծաղով Բարսեղը:— Իսկ ի՞նչպէս էք դուք այստեղ ապրում: Ի՞նչպէս է այժմ մօրդ առողջութիւնը: Ի՞նչպէս է Վառվառէն:

— Մայրիկը վատ է զգում, իսկ Վառվառէն արդէն մեղ

մօտ չի ապրում: Նա դերասանուհի է և շրջում է քաղաք-ներում:

Բարսեղը յուզուած կանգ առաւ:—Ի՞նչպէս թէ դերասանուհի:

—Է՛հ, այնպէս. անցեալ աշնան փախաւ մեզանից և ընկերացաւ մի ինչ որ դերասանիկի հետ:

—Նա ծիծաղեց՝ կոպիտ, դուհիկական ձևով:

—Իսկ ես չեմ իմացել. ասաց Բարսեղը յանդիմանական ձայնով: Դուք ոչինչ չէք գրել այդ մասին:

—Է՛հ, ի՞նչ գրենք, քմծիծաղ տուաւ որդին:—Ուրախալի բան հօ չէ:

Բարսեղի աչքի առաջ ներկայացաւ, ութ տարեկան աղջկայ սիրելի և անմեղ դէմքը, որ ասում էր. «Հայրիկ, հեքիաթներ պատմիր:» Նա լսեց նրա քրնքոյշ երեխայական ձայնը:

—Իսկ մայրդ, հաղիւ լսելի ու կոտրուած ձայնով հարցրեց նա:

—Նա վատ է, վերջին ժամանակները համարեա չի բարձրացել անկողնից:

Յանկարծ Բարսեղին տիրեց մի ինչ որ երկիւղ. ինչպէս գնայ իւր տունը: Ու նրան այնպէս թուաց թէ գնում է ոչ այն այգու միջով, որտեղ նա անց է կացրել իւր բախտաւոր տարիները, այլ թէ մի անծանօթ և օտար տեղ: Կարծես կոտորել են հին ամեհի ծառերը և նրանց տեղը անկել նորերը, կարծես քանդել են հին հողը ու ածել նորը...

Ահա և տունը: Ահա և երկու լուսաւորուած պատուհան, որտեղից երևում է, մի կին՝ նստած է բազկաթոռի վրայ:

Նրա դէմքը սպրդնած է և հիւանդոտ: Բայց նա ունի դէմքն է: Այդ դէմքը իւր սիրելի և երիտասարդ կնոջն է: Բայց նա այդպէս չէր:

Այդ ուրիշ դէմք է, օտարի, հեռաւորի և ի՞նչ սարսափելի է: Բարսեղը կանգնեց սանդուխքների վրայ ու հանդարտ ասաց որդուն.

—Առաջ գնա և նախազգուշացրու նրան...:

—Նա գիտէ ու սպասում է քեզ... պատասխանեց որդին ու առաջ գնաց:

Բայց Բարսեղը կանգնել էր ցածում և նայում էր պատուհանից: Սպրդնած կինը նստած էր բազկաթոռի վրայ ու լայն բացած աչքերով նայում էր շէմքին: Բարսեղին թուաց, որ կնոջ աչքերում ինչ որ երկիւղ կայ: Կարծես նրան թւում է թէ մի սարսափելի, հեռու և անծանօթ մարդ պէտք է մտնէ իրանց շէմքով:

Որդին գնաց:

«Իսկոյն կմտնէ», մտածեց Բարսեղը, ու սկսեց աչքով կլանել սպրդնած կնոջը:

Երկիւղը յանկարծ պատկերացաւ կնոջ աչքերում և նա գոռաց. «մտաւ»...

Բոպէն չանցաւ որդին մօտեցաւ պատուհանին, ու փեղկը կիսով չափ բաց անելով, ասաց հօրը.

—Հայր իմ, մտիր:

Բարսեղը բարձրանալով սանդուխքի աստիճաններով, մտաւ մութ հաշտը: Նա չիմացաւ որտեղով գնայ: Սկսեց ձեռները քսել պատերին: Շօշափելով, դուռը բաց արաւ: Կարծես մի անդունդ բացուեց նրա առաջ: Մթութեան մէջ խոնաւութեան հոտ էր գալիս: Նրան տիրեց մի ծաւալող զգացմունք, մի զգացմունք, որ կարծես մօտեցնում է զերեզմանին: Նա արագ ծածկեց դուռը ու կանչեց.

—Ես չգիտեմ, որտեղով մտնեմ: Զայն հանեցէք, որտեղ էք դուք: Այստեղ մութ է:

Իբրեւ պատասխան՝ պատի հակառակ կողմից լսուեց մի կոտրուած ձայն:

«Այդ կինս է կանչում»... մտածեց Բարսեղը:

Երբ յանկարծ ճրագի լոյսը երևաց: Նա տեսաւ շէմքում կանգնած որդուն:

Բարսեղը մօտեցաւ բաց դռանը

Երբ մտաւ սենեակը, տեսաւ կնոջը անդադար շարժւում է բազկաթոռի վրայ: Նա կամենում էր տեղից բարձրանայ:

—Այդ... դու... ես... դու: Կարծես մոռացութեան մէջ շնչում էր նա, նայելով նրան՝ լայն բաց արած տենդոտ աչքերով:

Բարսեղը մօտեցաւ կնոջը և զրկեց: Իսկ նա ծանրապէս ընկաւ նրա կրծքին: Եւ կարծես ինչ որ սառն և փայտէ մի բան ընկաւ նրա վրայ: Նա համբուրեց նրա երեսը, ձեռները, բայց ոչ մի ուրախութիւն չգգաց:

Նրան թուաց, թէ մի անշունչ և օտար մարդ է ընկած իւր կրծքի վրայ: Իսկ կինը վախկոտ ձայնով կրկնում էր. «այդ... դու... ես... դու...» և կարծես չհաւատալով իրան, շօշափում էր նրա ճերմակած գլուխը:

Բարսեղը կնոջը նստացրեց բազկաթոռի վրայ, ինքն էլ մօտը նստեց: Սյնուհետեւ սկսեցին խօսել՝ միմեանց վրայ նայելով շփոթուած և տարակուսուած աչքերով: Կարծես օտար մարդիկ էին: Իսկ որդին կանգնել էր պատուհանի մօտ ու անբաւական աչքերով նայում էր նրանց: Յետոյ նա հանեց ծխախոտը, ծխելով ու շվշվացնելով, դուրս եկաւ սենեակից: Բոպէ չսնցած՝ նրա բարձր շվշվոյրը լսում էր զրախ: Շնորհ հաջեցին: Ով որ մէկն էլ ձայնակցեց նրա շվշվոյին:

— Ինչպէս բոլորը փոխուել են... Հանդարդ ասաց Բարսեղը, նայելով իւր կնոջը:

— Սյո, պատասխանեց նա թոյլ ձայնով, — ես արդէն էլ այն չեմ ինչպէս դու թողեցիր: Վառվառէն չկայ, իսկ Սարգիսը մի կոպիտ, անպատկառ մարդ է... կինն ուշադրութեամբ և ախուր հայեացքով նայեց ամուսնուն: — Դու էլ ինչպէս ծերացել ես, տանջուած ես երեւում... բոլորովին ուրիշի նման ես...

— Սյո ես տանջուել եմ...

— Սյո, այո... այդ սարսափելի է:

Նրանք լռեցին:

— Խեղճ Վառվառէ... ասաց Բարսեղը. — ես յիշում եմ նրան՝ ինչպէս փոքրիկ երեխայ:

— Սյո, այո... այժմ փչացած անպիտան կին է դարձել...

— Ծանր են այդ բոլորը:

Բարսեղը մի տեսակ ուժասպառ յենուեց աթոռին և մնաց այնպէս մի քանի րոպէ: Յետոյ նայեց կնոջը, տեսաւ որ աչքերը ծածկուել էին: Նա սպրդնած անշարժ ընկել էր: Նա զիսկի նմանութիւն էր առել: Եւ նրան թուաց

թէ նա մեռել է: Բարսեղը բռնեց նրա ձեռից, կինը աչքերը բացաւ և սառնասիրտ հայեացքով նայեց ամուսնուն:

— Ի՞նչ պատահեց քեզ հետ հարցրեց Բարսեղը:

— Ես շատ յոգնել եմ... ասաց կինը հազիւ լսելի ձայնով: Սաստիկ յուզմունքից յետոյ ես միշտ կամենում եմ հանգստանալ. ներքի ինձ, ես չեմ կարող կռուել իմ յոգնածութեան դէմ: Սյո՛ւմ ես էլ այն չեմ, բոլորովին այն չեմ...

Բարսեղը բարձրացաւ իւր տեղից և դուրս եկաւ սենեակից:

Լոյսից յետոյ դուրսը աւելի մութն էր երեւում: Մանր անձրևը թեթեւ խշխշացնում էր տերևները: Ու հեռու անտառում կանչում էր գիշերուայ թռչունը: Բարսեղը նստեց սանդուխքի աստիճանին ու զլուխը թեքեց իւր ամի մէջ:

Նրան տիրում էր այն երկիւղը թէ՛ ինքը դարձեալ գտնուում է Սիբիրիայի՝ սառն, ճահճոտ տեղերում: Եւ նա զգաց մի ինչ որ ցրտութիւն: Նա ցնցուեց ամբողջովին՝ զլխից մինչև ոտքը: Թւում էր թէ ձիւն է գալիս և փչում է սառցնող քամին:

Մոմը վերջանում էր: Նրա լոյսի պղտոր ստուերները դողդողում էին պատի վրայ: Ճարձատում էր հին, մաշտած պահարանը, իսկ յատակի տակը քերում ու ծվծվում էին մկները...

Դիշերն անցել էր, բայց Բարսեղը դեռ չէր քնում: Տասը անգամ թերթում էր հին կեղտոտ այլեմի երեսները: Սյո երեսներից նայում էին նրան՝ մատաղ մանկական, մօտիկ դէմքեր: Բարսեղը նայում էր նրանց և նա կարօտով կամենում էր տեսնել նրանց կենդանի, շարժուող. — լսել նրանց ձայնը, զգալ նրանց մօտիկ, հարազատ հոգին: Բայց նրանք մեռել են: Եւ նրանց դէմքերը, հոգիները, ձայները... բոլորը մեռել են: Սյն բոլորը ինչ որ տեսել էր երեկոյեան: Թէ կնոջը, թէ որդու, թէ իւր դերասանուհի աղջկայ պատկերները՝ բոլորն այն չէին: Դրանք էլ միևնոյն կազմուածքով, միևնոյն անդադար զարկուող սրտով մարդիկ էին, որ նայում էին այլեմից: Նրանք հարազատ էին, իսկ

դրանք օտարներ են: Հարազատները մեռան յաւիտեան,
անդարձ և էլ ոյժ չկար նրանց կրկին վերադարձնելու:
Սարսափելի էր նրան իմանալ, որ կինն ու որդին քնած
են պատի ետեւում և, միեւնոյն ժամանակ զգալ, որ նրանք
այլ ևս չկան, որ նրանք մեռել են: Այգու ծառերն էլ, որ
կեանքով լի շրջում էին, այժմ նրանք էլ են մեռած:
Ինքն էլ իրան սարսափելի էր երեւում: Նրան թւում էր
թէ կեանքն ու մահը միեւնոյն են:

Մոմը հանգաւ: Մութ ստուերներն այժմ պարզուեցին
և սողացին պատերի վրայով: Նրանք հետզհետէ մեծացան,
մինչև որ լցրին ամբողջ սենեակը:
Մթնեց:



ԶԱՐԱՄԻՏ

ԳԱՐՍՎԱԴԱՆ ՀԵՔԻՆԹ

Վ. ԴՕԴՕՇԵՎԻՉ

ԹԱՐԳ.

ՕՐ. ՄԵՆԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ

Մեծ վեղիր՝ Աբղուրիա Համան-խանի մօտ մտաւ իւր
հաւատարիմ ծառան՝ Իփտիգարը, խոր զլուխ խոնարհեց
ու ասաց.

— Վարձատրութիւն չկայ այն քամու համար, որ ծա-
ղկների հօտ է փչում, բայց նա մեղաւոր էլ չէ, եթէ
նրանից աղբի հօտ է դալիս: Բոլորը կախուած է թէ որ-
տեղից է նա փչում: Այն քամուց ծաղկի հօտ չի գալ,
եթէ փչում է աղբակոյտից: Ես բերել եմ վատ լուրեր,
որովհետեւ եկել եմ վատ տեղերից:

Մեծ վեղիրն ասաց.

— Մի վախիր, խօսիր:

— Բո իմաստութիւնով նշանակուած լինելով Հե-
տամուտ լինելու՝ ոչ միայն թէ ինչ են խօսում, այլ և
ինչ են մտածում: Ժողովրդի մէջ, ես ի պաշտօնէ մտայ
այն սրճարանը, որի տէրն է մի ոմն Սայիբ և որը զրտ-
նում է Մեծ-Բաղարում: Այդտեղ, պետութեան շահով
զբաղուած, սկսեցի չամչով ու ոչխարի մսով պատրաս-
տուած փլաւ ուտել: Ուրիշ պարսիկներ էլ նոյնն էին
անում: Նրանք միայն իրանց բաւականութեան համար,
իսկ ես անում էի սոսկ նուիրուած լինելով ծառայու-
թեանս: Փլաւը կերանք, յետոյ սուրճ խմեցինք, միգի-
ղէններով և ռահաւախութեամբ քաղցրացինք, երաժշտու-
թիւն լսեցինք ու նայեցինք ուսումնական արջին: Այդ
պարսիկներից մէկը՝ Սադրաշ անունով, որ վարժապետ է
ուսումնարաններում և փոքրիկ երեխաներին սուրբ օրէնքն

է սովորեցնում, սկսեց բարձրաձայն խօսել քո ողորմածութեան մասին:

— Բարձրաձայն խօսել իմ մասին: Գովեց:

— Ինչպէս և վայել է բարի պարսկին— իմ լեզուն խռոված է ականջներին հետ: Երբէք նա չի կրկնիլ այն, ինչ որ լսել է:

Մեծ վիզերն ասաց.

— Քամուն չեմ պատժիլ, խօսիր:

— Նա ասաց... նա ասաց, որ ձերդ զօրութիւնը գող է:

— Հըմմ... շէնջաց մեծ վիզերը, բարի պարսկները նրան չհաւատացին:

— Ահ, խոր յողոց քաշեց Իփտիգարը. անպիտանը խօսում էր մի այնպիսի ճարտարութեամբ, որի նման Աստուած տար, որ ամեն մի պարսիկ կարողանար այնպէս գովել իւր իշխանաւորին: Առ այդ նա հռչակուած է ժողովրդի մէջ ինչպէս ուսումնական և իմաստուն, նոյնպէս և սրբակրօն և բարեգործ մարդ. նրան հաւատատացին բոլորը: Եւ սրճարանում միաձայն կրկնեցին «մեծ վիզերը»... դու ինքդ զիտես թէ ինչ: Այդ լսելով, ես սաստիկ վշտացայ, որ շրջմոլիկներն, որոնք օրն անց էին կացնում պարող արջերին նայելով, շատակերներն, որոնք ոչխարի մսի հետ փլաւը բռնումն են ուտում, որ պորտաբոյժ մարդիկ ամբողջ օրն ընկած սրճարաններում, որ մինչև անդամ այդպիսի մարդիկ համարձակում են խօսել քո ողորմածութեան մասին, իբր թէ դու... ես ասացի թէ ինչ: Ես այնքան վրդովուեցի, որ անհրաժեշտ համարեցի ձեզ յայտնի դարձնել:

Մեծ վիզերն ասաց.

— Լաւ: Երբ որ հրդեհի մասին սկզբից ես իմանում, ուրեմն նա կիսով չափ հանգցրած է:

Նա կանչեց իւր մօտ պահակների գլխաւորին և ասաց.

— Այս ժամին դնացէք Սայիբի սրճարանը, որ զբոսնում է Մեծ-Բաղարում: Բոլոր կերակուրներն, որոնք այնտեղ լինում են, կերէք: Վաճառքից ստացած ինչքան

փող գանէք, վերցրէք ձեզ համար: Սրճարանը փակեցէք: Իսկ այնտեղ թափառող վարժապետ Սադրահին կալանաւորեցէք և բանտ նստեցրէք: Թող իմանան ինչպէս պիտի սովորեն լիտի խօսքեր ասել իրանց իշխանաւորի մասին:

Կէս ժամ էլ չանցաւ, որ պահակների գլխաւորը վերադարձաւ ու ասաց.

— Յայտնում եմ, որ ձեր հրամանը կատարուած է: Սայիբը քայքայուած է: Սադրահը բանտուեց: Իմ տարած հրամանը որոտ էր, կայծակ էր, որ շանթահարեց մեղաւորներին: Երեւի այսպէս պիտի լինէր արդարապատուութիւնը:

Մեծ վիզերը խաղաղուեց:

— Վատ ծաղիկը ոչնչացաւ, այն էլ իւր ամանի հետ:

Անցաւ երկու շաբաթ:

Բաղարով անցնելիս Իփտիգարը լսեց երկու առեւտրականների բարձրաձայն վէճը: Ի պաշտօնէ հետաքրքրուեց, կանգ առաւ և լսեց նրանց:

Առեւտրականներից մէկը վշտացած յայտնում էր միւսին, որ տասը վարունգ ծախելուց նա երկուսը գողացել է:

— Դու գող ես, գոչում էր վշտացածը:

Բայց գողացողը միայն ժպտում էր այդ տեսակ վերաւորանքի համար:

Ուրիշ ժամանակ գուցէ ես առնէի դդումը և զարնէի զլեիդ: Բայց այժմ «գող» խօսքի մէջ վերաւորական ոչինչ չկայ: Այդ միւսնոյն է թէ ինձ «մեծ վիզեր» անուանել: Եթէ մեծ վիզերին էլ գող են ասում, էլ ինձ ի՞նչ տիտղոս պիտի ասն: Քանի որ մեծ վիզերը գող է, հասարակ մահկանացուներին հօ ինքը Այլահն է հրամայել:

Իփտիգարը ի պաշտօնէ հետաքրքրուեց և հարցրեց.

— Դու հրտեղեց զիտես, բարի մարդ, որ մեր մեծ վիզերը այն է, ինչ որ դու ասում ես:

—Որ նա գոյ է. ծիծաղեց առևտրականը: Ամօթ կլինի, որ այդ չիմանամ: Իմ աներոջ որդին ասաց, որը գողութեան համար բանտումն էր և նոր դուրս եկաւ: Բանտում՝ նրանց մօտ՝ մեծ վեղերին ուրիշ անուն չեն տալիս բացի «գող» խօսքից: Այդ մասին նրանց շատ լաւ պատմել է վարժապետ Սաղրահն: Հա, հա, հա... Եթէ մինչև անգամ անգղամները, սրիկաները, ձի գողացողները, խաբէբանները, որոնք պահուում են բանտումն՝ մեծ վեղերին ուրիշ անուն չեն տալիս, բացի «գող» խօսքից, կուզէի լսել թէ ի՞նչ անուն են տալիս նրան՝ ճշմարիտ մարդիկը:

Իփտիգարը կալանաւորեց առևտրականին և շտապեց զեկուցանել մեծ վեղերին:

Վեղերը բարկացաւ ինքն իւր վրայ:

—Ուզեցի պատժեմ, խողին դրի ցիխի մէջ:

Նա հրամայեց անյապաղ Սաղրահին հանել բանտիցը և բերել իւր մօտ:

Անպիտան, չկարողացար ապրել այս լուսաւոր Թէհրան քաղաքում, որտեղ կարելի է և լաւ ուտել և հրաժշտութիւն լսել և նայել ուսումնական արջերին և ուրիշ շատ բաւականութիւններ վայելել:

—Ինչ դժուար էր այդ բոլորից օգտուել ես նստած էի բանտում:

—Մոռացել ես առածը: «Ի՞նչ է լեզուն: Լեզուն մի սեպհական բանտի բանալի է, որ ամեն մի մարդ պահում է իւր հետ», շարունակեց վեղերը. չկարողացար լուսաւոր մարդկանց հետ ապրել, այժմ գնա վայրենիների հետ ապրիր:

Եւ հրամայեց Սաղրահին ուղարկել կիսամութ երկրների ամենախուլ անկիւնները:

Մի անգամ Իփտիգարը անցնելով փողոցում, յանկարծ նկատեց մի տարօրինակ հագնուած մարդու:

—Երեւի այստեղացի չէ, նկատեց Իփտիգարը:

Այդ մարդը գնում էր և նայում էր տներին:

Իփտիգարը ի պաշտօնէ ժպտալով, ասաց.

—Ողջոյն քեզ, անծանօթ, դու երեւի հեռու եր-

կրներից ես եկել և կարծես ինչ որ բան ես որոնում: Չե՞մ կարող քեզ օգտակար լինել: Ես այստեղացի եմ, ես ամեն բան գիտեմ:

—Ես իսկապէս հեռու տեղից եմ և իմ առևտրական գործով առաջին անգամ եմ Թէհրան եկել, պատասխանեց անծանօթը: Ես կուզէի տեսնել մեծ վեղերի տունը և, եթէ կարելի է, իրան էլ:

—Բարի ցանկութիւն է. ասաց Իփտիգարը: Բայց ինչո՞ւ քեզ մեծ վեղերը այդպէս հետաքրքրում է, բարի անծանօթ:

—Դէ, շատ են ասում թէ նա գող է, միամտաբար պատասխանեց հեռաւոր տեղից եկւորը: Ես ինքս վաճառական եմ և ինչ հետաքրքիր է տեսնել այդ տեսակ գողին:

—Ո՞վ ասաց քեզ այդ հարցրեց սարսափած Իփտիգարը:

—Միթէ այստեղ՝ Թէհրանում այս մասին ոչ ոք չգիտէ, զարմացաւ վաճառականը: Այ, քեզ մայրաքաղաք: Ոչինչ, լուսաւորուած քաղաք է: Հա, հա, հա... Պարսկաստանի ամենահեռաւոր անկիւններում գիտեն և դուք չգիտէք: Մեր գաւառը կիսամութ երկրի մէջ ամենախուլ անկիւնն է: Ելել ամեն մի երեխայ գիտէ, որ «մեծ վեղերը գող է»: Մենք այդ իմացել ենք յայտնի գիտնական, իմաստուն և սրբակրօն Սաղրահից, որին ուղարկել են մեզ մօտ Թէհրանից՝ մեզ լուսաւորելու համար:

Իփտիգարը հրամայեց վաճառականին կալանաւորել, իսկ ինքը վազեց մեծ վեղերին այդ մասին զեկուցանելու:

Մեծ վեղերը սաստիկ բարկացաւ ինքն իւր վրայ:

—Կամենալով մարդկանցից գաղտնիքս ծածկել, ինքս նամակ ուղարկեցի նրա մասին: Ինքս աշխատեցի, որ իմ մասին աշխարհի ամեն մի ծայրում փող փչեն: Քոստոյիստին ուղարկեցի մաքուր հովտի մէջ արածելու:

Եւ հրամայեց.

—Սղն սրիկայ Սաղրահին անյապաղ վերցնել կիսա-

1001
494



մութ աշխարհից և ուղարկել կիսօրեայ աշխարհի խորքերը և այնտեղ թողնել խիտ անտառների մէջի մէջ: Նա չկարողացաւ մարդկանց հետ ապրել, թող ապրի կապիկների հետ:

Այդպէս էլ արին:

Մնացաւ երեք ամիս:

Մեծ վիզերը համարեա թէ մոռացել էր այդ բոլոր աշխարհութիւնները: Բայց մի օր յանկարծ նա լսեց, որ իւր համար այն հեռաւոր երկրից նոր ուղարկած թութակը ամբողջ ուժով գոռաց.

«Մեծ վիզերը գող է»:

Շուկայումն էլ ծախում էին նոր բռնած ու նոր բերած թութակներ:

Նրանք բոլորովին վայրենի էին և հազիւ կարողանում էին ասել.

— «Յիմար»:

Բայց ամեն մի վայրենի թութակ կանչում էր.

— «Մեծ վիզերը գող է»:

Մինչև անգամ շահի պալատը դեռ նոր բերած թութակն էլ հէնց կանչեց.

— «Մեծ վիզերը...»

Բայց այդ միջոցին Իփաիգարը, որ ի պաշտօնէ բարեբախտաբար այդտեղ էր, իսկոյն կծեց նրա գլուխը:

Այդպիսով էլ չթողեց վերջացնել խռովարար փրզան:

Մեծ վիզերն ընկաւ խռովայոյզ զրութեան մէջ:

— Այս ի՞նչ է, միթէ բնութիւնն ինքը հակառակ է իմ գէմ: Բայց բնութեան ղեկավարն Աստուած է, իսկ Աստուած կատարեալ է: Նա չի կարող ապերախ լինել: Ես իւրաքանչիւր տարի մի զորդ եմ ընծայում մեզիդին:

— Գնա իմացիր այդ որ անպիտանն է թութակներին այդպիսի լրբութիւններ սովորեցնում: Ո՞վ է իւր սեպհական լեզուն տուել թութակին:

Իփաիգարը երեք օր վազվզեց քաղաքի մէջ և ոչ կերած, ոչ խմած՝ վերադարձաւ մաշուած ու յուզուած:

— Հաւատա իմ փորձականութեանը, ով իմ օրերի հրամանատար: Ոչ ոք չի սովորեցնում թութակներին: Մենք զործ ունենք հրաշքի հետ: Ես կալանաւորեցի բոլոր թութակ վաճառողներին: Նրանք բոլորը միաձայն միևնոյնը ցոյց տուին: Այժմ այնպէս թութակներ են ծնւում, որ ի բնէ կարողանում են հայհոյել քեզ: Նրանք ասում են թէ բոլոր վայրի ծմակը, որ գտնւում է կիսօրեայ երկրում և որտեղից բերում են այդ թռչունները, դրոգում է նրանց գոռոցով. «մեծ վիզերը»... և յետոյ թութակի խօսքը: Հրաշք է:

Մեծ վիզերը ճակատին խփեց և բացականչեց.

Գրազ եմ գալիս: Ուղտ եմ դնում հաւի դիմացն, որ այդ բոլորը Սադրահի օյիններն են: Այդ նա է, այն անպիտանն է թռչուններին այդ տեսակ լրբութիւններ սովորեցնում: Լաւ, այժմ ես կիմանամ նրան ինչ կանեմ:

Եւ հրամայեց մի ամբողջ զօրք ուղարկել կիսօրեայ երկրը, շրջապատել նրա ծմակները, բռնել Սադրահին ու բերել իւր մօտ:

Իսկական պատերազմ:

Մի ամբողջ զօրք շրջապատեց կիսօրեայ երկրի ծմակները:

Ծմակի մէջ սկսեցին լսուել տապալուող ծառերի ճայթիւնն ու հառաչանքը:

Սխալմամբ կալանաւորեցին և շղթայեցին 375 կապիկ, որոնց սկզբում Սադրահի տեղ էին ընդունել:

Իսկ սարսափահար թութակները ճգնէ—ճիւղ էին թռչկոտում և ամբողջ ուժով գոռում.

— «Մեծ վիզերը գող է»:

Այսպիսով աւելի մեծացնում էին զենւորների կատաղութիւնը:

Վերջապէս չարագործը բռնուեց, այն էլ յանցանք գործելու միջոցին:

Նա նստած էր մի կանաչ տեղ, ընկոյզներով կերակրւում էր թութակներին ու խռովարար բաներ սովորեցնում նրանց:

Նրանք էլ յիմարացած ամբողջ ուժով դռնում էին.

— «Մեծ վեղերը գող է»:

Եւ այսպէս նրանք կերակրի հետ ճաշակում էին և խռովարարութիւն:

Այսպէս և չարագործն ընկոյզների հետ անկում էր և չարութեան սերմեր:

Զինուորները բռնեցին Սադրահին, ոտներն ու ձեռները շղթայեցին և մեծ ուրախութիւններով և երաժշտութիւնով բերին նրան մեծ վեղերի մօտ:

— Ա՛խ, անպիտան, ասաց մեծ վեղերը. բաւական չէ՞ր, որ մարդկանց սովորեցնում էիր, թռչուններին էլ: Բայց ճամբադ չես դտել: Ես յանցանք գործեցի՝ երկնքի և մեր երկրի առաջ: Յանցանքն իմ առատ բարութիւններն էին, որ արի: Չափաւորութիւն—ահա բնութեան օրէնքը: Արեգակն՝ ինքը ջրմամբնում է չափաւոր—լաւ: Եթէ ջրմամբութիւնը չափազանցանէ, երաշտ կլինի: Անձրեւը եթէ թափւում է չափաւոր՝ առատութիւն է լինում: Չափազանցը — ջրհեղեղ: Բարեգործն էլ՝ ինչպէս արեգակը, պէտք է լինի չափաւոր: Քեզ համար արած բարութիւնովս ես յանցանք գործեցի: Բայց այժմ ես կկարողանամ խրճիկել քո կոկորդը:

Եւ հրամայեց.

— Նստեցնել նրան ցցի վրայ:

— Կոկորդ խճիկելը տարօրինակ միջոց է: Հէնց այդ նկատեց Սադրահը: Միևնոյն օրը՝ հրապարակի վրայ նրան նստեցրին սրած ու երկաթով ամրացրած ցցի վրայ:

Մարդիկ սիրում են հանդէսներ:

Լաւը, որ չի լինում, վատին են նայում:

Ամբողջ Թէհրանն եկել էր այդ մահապատիժը տեսնելու:

Սադրահը նստել էր ցցին, «ա՛խ» էր քաշում և ընկնում ցած:

— Ինչո՞ւ համար. հարցրին ամբոխի մէջ հասկացողները:

— Ի՞նչ նրա համար, որ ասել է «մեծ վեղերը գող է»:

Դրանով կարծես նա զղաց թեթեւութիւն:

Սադրահը «ա՛խ» էր, քաշելով, դռնալով ու հառաչելով, ասաց.

— Ես ի՞նչ կարող էի ասել, քանի որ այդ ճշմարիտ է: Մանկութիւնից ես սովորել եմ, վերջը սկսեցի ուրիշներին սովորեցնել, որ հարկաւոր է միշտ ճշմարիտը խօսել:

Եթէ նրա մասին ուրիշ տեսակ խօսէի, ոչ ոք չէր հաւատալ, որովհետեւ ուրիշ բան՝ բոլորը կլինէր սուտ:

Եւ տեսնելով թէ ինչպէս է տանջւում ու մեռնում Սադրահը, ամբոխը վճռեց.

— Ուրեմն ճշմարիտ է, քանի որ մարդը ցցի վրայ նրստելով էլ նոյնն է ասում: Ուրեմն էլ ուրիշ բան չի կարելի մեծ վեղերի մասին ասել, եթէ ցցի վրայ նստելով էլ մարդն ուրիշ բան չի կարողանում մտածել:

Այդպէս ամբողջ Թէհրանն իմացաւ և հաւատաց, որ «մեծ վեղերը գող է»:

Այժմ արդէն բոլորը — ծերունիները և երեխաները, կանայք և զինուորները, հարուստներն ու իմաստունները, աղքատներն ու յիմարները, ուսումնականներն ու տղետները, բոլորը միաձայն ասում էին.

— «Մեծ վեղերը գող է»:

Մինչև անգամ կրճատեցին:

Սովորութիւն դարձաւ, որ էլ ոչ ոք չէր ասում «մեծ վեղերը», այլ ուղղակի ասում էին.

— «Մեծ գողը»:

Եւ ամենքն էլ հասկանում էին թէ խօսքը ում մասին է:

Տեսնելով, որ չարիքն այդքան մեծ ծաւալ է ստացել, մեծ վեղերը յուզուեց և ինքն իրան ասաց.

— Օհօ, հրդեհն այնպէս բռնկուեց, որ մենակ իմ իմաստութիւնով դժուար է նրան հանգցնել: Ի՞նչ անել: Երբոր մարդուս փողը պակասում է, նա փոխ է առնում իւր հարեանից:

Եւ հրամայեց ընտրել ամբողջ երկրի իմաստուն մարդկանց և ուղարկել Թէհրան՝ խորհրդի:

Ընտրեցին և ուղարկեցին:

Այստեղ կային շատ ուսում առած մօլլաներ և այն-

պէս ծերունիներ, որոնք իրանք էլ չեն յիշում թէ՛ իրանք երբ են ծնուել: Մարդիկ կային, որ սկզբում մուրացկաններ են եղել, բայց վերջը հարստացել են, զբաղով հաստատել իրանց անվիճելի իմաստութիւնը: Աստիճանաւորներ կային, որ կարողանում էին իրանց պահել ամենաիմաստուն իշխանաւորի մօտ էլ և այդպիսով ցոյց են տուել իրանց իմաստութեան առաւելութիւնը:

Եւ, ինչպէս որ հասարակ կանաչեղէնի արանքում համեմ էլ է բնուում, մոռացութեան չէին տուել և երկրագործներին:

Երկրագործները իրանց միջից ընտրեցին ծերունի Նուէղեմին, որի իմաստութեան համար նրանք երաշխաւորուեցին ինչպէս իրանց սեպհականի համար:

— Այս արդէն գիտէ, այս խորհուրդներ կտայ:

Մեծ վեղերը ընդունեց նրանց, սովորական ողջոյններով մաղթեց նրանց վրայ Աստուծոյ օրհնութիւնը և ասաց.

— Կարեւորութիւն չունիմ ծածկելու թէ՛ ինչու համար ձեզ այստեղ կանչեցի: Դուք այդ կարող էք լսել ամեն մի փողոցում, ամեն մի շուկայում, ամեն մի անկիւնում:

«Մեծ վեղերը գող է»: Պարսկաստանի միակ խօսակցութիւնն այդ է: Այդպէս չի կարող շարունակուել: Պէտք է այդ բոլորին վերջ դնել: Եթէ մեծ վեղերին այդպէս են կոչում, ինչպէս կանուանեն, արդեօք, մի փոքրիկ զաւառի իշխանաւորի, էլ չեմ տեսնում մի շուկայի կամ մի փողոցի վերահսկողին: Ժողովեցէք ձեր իմաստութեան բոլոր թափը և մտածեցէք՝ ինչպէս վերջ դնել այդ տեսակ չարանեղ անարգանքին գէպի իշխանաւորները:

Ջանքերի պակասութիւն չկար:

Ամեն մէկն աշխատում էր իւր իմաստութեամբ գերազանցել միւսին:

Բայց առողջ գատելով, իմաստունների խորհուրդը զրտնուեց սակաւ պիտանի:

Էբն - Կադիֆը, որ ինքն երբեմն մի մեծ նահանգի կառավարիչ էր, առաջարկեց - կտրել այն ամեն մէկի գլուխն որ կարտասանէ, «Մեծ վեղերը գող է»:

Մեծ վեղերը գլուխը շարժեց:

— Մեր երկիրը կտառնայ անապատ: Միմիայն կմնանք դու և ես: Դեռ քո գլուխն էլ պէտք է կտրել, որովհետեւ Հէնց հիմա ինքդ էլ արտասանեցիր:

Յիրն - Էգլէն, նոյնպէս ծառայութիւններ արած մարդ, խորհուրդ տուաւ.

— Առհասարակ արգելել որ և է բան խօսելու: Այն ժամանակ այս բանն էլ չեն ասիլ:

Բայց մեծ վեղերը ախուր շարժեց գլուխը:

Միթէ կկարենաս հետամուտ լինել:

Եւ հաւատարիմ Իփաիգարը արտասուքն աչքերին հաստատեց.

— Ոչ մի կերպ չես կարող հետամուտ լինել:

Երկար փորձելից յետոյ իմաստութեան եռանդն ընկաւ:

Եւ վերջապէս իմաստութիւնն իսպառ լռեց:

— Այս ի՞նչ է, սարսափահար գոչեց մեծ վեղերը. միթէ ոչինչ չէ՞ք կարող խորհուրդ տալ: Միթէ ոչ-ոք միջոց չգիտէ:

Այն ժամանակ յետին շարքերից բարձրացաւ Նուէղեմը, ամօթխածութեամբ գլուխ խոնարհեց և ասաց.

— Ես:

— Խօսիր, ասաց մեծ վեղերը ուրախացած:

— Դու ուզում ես, որ էլ չասեն թէ «մեծ վեղերը գող է»:

— Այո:

— Ես գիտեմ միջոցը. — ամենահաւատին, իսկականը և միակը:

— Ի՞նչ է, ուրախացաւ մեծ վեղերը:

— Դադարիր գողանալուց:

Մեծ վեղերը հրամայեց Հէնց տեղն ու տեղը կտրել նրա գլուխը:

— Երկու չարամիտներից, ասաց նա, Սաղրահը աւելի աներկելաղալի է: Նա ուզում էր ինձ զրկել միայն բարի անունից, իսկ սա մինչև անգամ և եկամուտներից:



ԳԻՆՆ Է 15 Կ0Պ.

Ցանկացողները պէտք է գիմեն՝

Թիֆլիզ՝ Գուտաենրերգ գրափաճառանոց:

Մոսկուա՝ Թարգմանողին՝ Москва, Куз-

нецкий пер. д. Хомякова, «Тулонъ»

№ 10.

ՀՀ Ազգային գրադարան



NL0310777

